

Financed by



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented by

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ (ՀՀՄ)

ՀԱՄԱՏԵՔՍ

Հայաստանում Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագիրը կոչված է աջակցել Հայաստանին շարունակել իրականացնելու Եվրոպայի խորհրդի անդամ պետության իր կանոնադրային և հատուկ պարտավորությունները և հզորացնել տեղական ինքնակառավարման համակարգի հաշվետվողականությունն ու արդյունավետությունը: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) հզոր և գործուն միությունը տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգի հիմնական տարրն է հանդիսանում:

Ծրագիրը ֆինանսավորվում է Շվեյցարիայի կառավարության և Եվրոպայի խորհրդի կողմից: Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը «Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում» քառամյա ծրագրի շրջանակներում, որը համակարգում է Շվեյցարիայի Չարգացման և համագործակցության գործակալությունը՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՅԸ), Միավորված ազգերի զարգացման ծրագրի (ՄԱՉԾ), Համաշխարհային բանկի և Տարածքային զարգացման հիմնադրամի (ՏՀՀ) հետ համատեղ:

ՆՊԱՏԱԿ

Ծրագրի նպատակն է Հայաստանի համայնքների միության (ՀՀՄ) կարողությունների ամրապնդումը, որի արդյունքում ՀՀՄ-ն կունենա ավելի ակտիվ մասնակցություն Հայաստանի կառավարման համակարգում՝ 2014թ. մարտին Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի կողմից ընդունած «Հայաստանում տեղական ժողովրդավարության իրավիճակի մասին» թիվ 351 (2014) հանձնարարականի համաձայն:

Ծրագրի աջակցության շրջանակներում ՀՀՄ-ն կզարգացնի իր ինստիտուցիոնալ կարողությունները, ինչպես նաև կամրապնդի Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխումների գործընթացում իր ունեցած դերակատարումը: Արդյունքում, ՀՀՄ-ն կկարողանա ազդեցություն ունենալ որոշում կայացնող կառույցների վրա՝ ապակենտրոնացման պետական քաղաքականության շուրջ՝ երկխոսությունը բարելավելու նպատակով: Ծրագիրը կնպաստի շահագրգիռ կողմերի միջև համագործակցության և երկխոսության կայացմանը, ինչպես նաև կխթանի տեղական ժողովրդավարության սկզբունքների տարածումը՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի համաձայն:

ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ակնկալվում է, որ ծրագրի ավարտին ՅՅՄ-ն կունենա.

- ▶ կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացման ռազմավարություն, որը հավանության կարծանանա իր անդամների կողմից,
- ▶ հզոր ներքին կառավարման և ղեկավարման համակարգ,
- ▶ միության անդամների հետ բարելավված հաղորդակցման համակարգ,
- ▶ կատարելագործված վարչական և ֆինանսական կառավարման համակարգ:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մի շարք միջոցառումների, տեխնիկական և փորձագիտական աջակցության շնորհիվ ՅՅՄ-ն հնարավորություն կունենա բարելավելու իր ներքին կառավարման համակարգը, մատուցելու կատարելագործված ծառայություններ իր անդամներին՝ նրանց շահագրգռելով միավորված ձայնով մասնակցել ապակենտրոնացման վերաբերյալ պետական քաղաքականության մշակման գործընթացին և լսելի դարձնել իրենց ձայնը:

ԵՐԿԻՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Ծրագրի տևողությունը

01.11.2014 – 30.04.2017

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի ներդրում

674,500 եվրո

Եվրոպայի խորհրդի ներդրում

150,125 եվրո

Իրականացնող կազմակերպություն

Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես

Հիմնական գործընկերներ

Հայաստանի համայնքների միություն
Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՀՀ կառավարություն

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում

Վազգեն Սարգսյան փողոց 26/1
Երևան, 0010, ՀՀ

• Տաթևիկ Դավթյան

Ծրագրի ղեկավար
Էլ. փոստ՝ tatevik.davtyan@coe.int
Հեռ.՝ (+ 374 10) 54 63 22 (ներքին՝ 120)